ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

С. К. ДАРОНЯН, *Микаэл Налбандян, Проблемы творчества и литературных связей*, Издательство АН Арм. ССР, Ереван, 1975, 380 стр.

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» հետազոտության հրապարակումից անցել է շուրջ երկու տասնամյակ։ XIX դ. հայ հասարակական մտքի ուսումնասիրությունը նոր տեղաշարժեր է ապրել։ Ճիշտ է, դժվար է հաղթահարել այդ հետազոտության և՛ ազդեցությունը (գիտական կողմնորոշումների իմաստով), և՛ պրոբլեմի նոր ուսումնասիրության արդյունավետության վերաբերյալ ծնվող իրավացի կասկածները։ Բայց, այնուամենայնիվ, յուրաքանչյուր սերունդ փորձում է նորովի ընթերցել Նալբանդյանին և ճանապարհ հարթել պատմական ճշմարտության ու սեփական ինքնաճանաչության առաջ։

Նալբանդյանագիտության 1960-ական թվականների ձեռքբերումները ամենից առաջ կապվում են Սերգեյ Դարոնյանի անվան հետ, մի գիտնական, որ նախապես, Մոսկվայում ապրած տարիներին, փորձում էր գիտա-մասսայական հրապարակումների օգնությամբ պրոպագանդել Նալբանդյանի գործն ու կյանքը, միութենական ընթերցողին կողմնորոշելով հայ-ռուս հեղափոխական համագործակցության խնդիրներում։ Ապա և 1964 թ. հրատարակած «Նալբանդյանը և ռուս հեղափոխական-դեմոկրատները» գրքում բացահայտելով Գերցեն—Օգարյով, Չերնիշևսկի—Սերնո-Սոլովևիչ հեղափոխական խմբակցությունների հետ Մ. Նալբանդյանի ունեցած կապերն ու գաղափարական ընդհանրությունը, հեղինակը, բացի գիտությանն հայտնի փաստերից, ներբերում է և հնօրյա արխիվներից ու հրատարակություններից քաղված նոր փաստեր, մասնավորապես հաստատում Մ. Վոլոկի և ուկրաինական իրականության հետ հայ հեղափոխականի գաղափարական համագործակցության իրողությունը։ Վերջին տարիներին հայտնաբերվեց Ս. Նալբանդյանի կորած երկերից մեկը՝ «Մինին խոսք, մյուսին հարան» վիպակը։ Հայտնաբերողն ու արժեքավորողը դարձյալ Սերգեյ Դարոնյանն էր։ Այժմ մեր գրական ու գիտական կյանքում չկա որևէ մեկը, որ Նալբանդյանի ժառանգության ուսումնասիրության հարցերում չդիմի Ս. Դարոնյանի աջակցությանն ու օգնությանը։ Դարոնյանն է, որ բազմաշխատ Արամ Ինճիկյանից հետո կանգնում է Նալբանդյանի ժառանգության բանասիրական հետազոտությունների գլուխ և կազմակերպում հեղափոխական դեմոկրատի գիտական վաստակների ռուսերեն թարգմանությունն ու համամիութենական պրոպագանդան։

Գրախոսվող այս աշխատությունը գիտնականի բազմամյա զբաղումների արդյունք է։ «Ռուսաստանի ժողովուրդների առաջադեմ մտածողների մարտական համագործակցությունը ռուս ազատագրական շարժման գործիչների հետ հանդիսանում է 60-ական թվականների հիանալի ժամանակաշրջանի յուրահատուկ գծերից մեկը»,— գրել է Ս. Դարոնյանը գրքի նախաբանում (էջ 7)։ Ընդ որում, գիտնականը ելնում է այն տեսակետից, որ ընդգծել է Վ. Ի. Լենինը «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» հայտնի հոդվածում։ Ռուս հեղափոխական դեմոկրատները, մասնավորապես Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկին, ձգտում էին միաբանել երկրի դեմոկրատական ուժերը՝ ուղղելով դրանք ինքնակալական-ճորտատիրական ռեժիմի դեմ։ «Համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատ»,— այսպես էր կոչում Լենինը Չերնիշևսկուն, այդ կերպ ընդգծելով Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատների առաջատար դերը հեղափոխության միասնական լագերում։ Կարելի է ասել, որ այս տեսակետը ընկած է «Միքայել Նալբանդյան» գրքի հրապարակախոսական պաթոսի հիմքում։ Ներկայացնելով ազգային-հեղափոխական ուժերի և սրանց գաղափարախոսների անմիջական կապերն ու առնչությունները ռուս իրականության և հատկապես հեղափոխական-դեմոկրատական միշտավայրում խմորվող գաղափարների ու ծրագրերի հետ, հետազոտողը կիրառում է ռուս 60-ականների հոգևոր ժառանգությանը Վ. Ի. Լենինի տված գնահատականը (հաշվի առնելով, իհարկե, ամեն մի տվյալ ժողովրդի կոնկրետ-պատմական զարգացման յուրահատկությունները) և այդ ճանապարհով ստուգում ու որոշում

նրանց լուսավորական-հեղափոխական միսիայի հասարակական արժեքն ու պատմական ետնախորքը։

Այս տեսակետից հետաքրքրական է «Միքայել Նալբանդյան» աշխատության, եթե կարելի է այսպես ասել, ներքին-գիտական ուղղվածությունը։ Սկսելով նորնախիջևանյան ուսումնառության տարիներից, Դարոնյանը համահավաքում և ի մի է բերում այն բոլոր փաստերը, որոնք կողմնորոշում էին պատանի Միքայելին դեպի ռուսական մշակույթն ու գրականությունը։ «Նախիջևանյան շրջան։ Շփումը ռուս գրականության հետ» գլխում գիտնականը բերում է բազմաթիվ ու նորովի ընթերցված փաստեր։ Չափազանց կարևոր են այս տեսակետից Նալբանդյանի և Ա. Ս. Գրիբոյեդովի գաղափարական ստեղծագործական կապերի հետ առնչված բանասիրական պրպտումների արդյունքները։ Ի դեպ, Դարոնյանը դիպուկ է նկատում, որ Չացկու («Խելքից պատուհաս») և Կոմս Էմմանուելի («Մեռելահարցուկ») միջև ընդհանուր շատ գծեր կան, և որ Չացկու ակտիվ բնավորությունը, հեղափոխական իր պահվածքի մեջ, հոգեհարազատ է եղել Նալբանդյանին դեռ պատանեկության շրջանից սկսած։

Ս. Դարոնյանի հետազոտական մեթոդին հատուկ է ուղղամիտ անաչառությունը և փաստերն ընթերցելու ռեալիստական կողմնորոշումը։ Նալբանդյանագիտությունը շատ բան է կուտակել մեծ հեղափոխականի հասարակական հայացքների բարեշրջմանը հետևելու համար։ Կենսագրական իրողությունների հաշվառմամբ՝ շատերն են փորձել բացատրել ու մեկնաբանել Մ. Նալբանդյանի վաղ հակումը դեպի մատերիալիստական աշխարհայեցողությունը։ Ս. Դարոնյանը նույնպես հետևում է այս մեթոդին, այս անգամ անդրադառնալով ժամանակի բժշկագիտական մտքին, Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի դասախոսների և պրոֆեսորների գիտական նվաճումներին, մասնավորապես կենսաբան-էվոլյուցիոնիստ Կարլ Ռուլյեի գործունեությանը և աշխարհայացքին։ Հյուսիսափայլյան գիտա-մասսայական հոդվածների («Թե ինչպես է երկրագունդի ներքին կազմակերպությունը», «Աշխարհի կազմածը և նորա հրաշալիքները») նշանակությունը բնավ էլ չգերագնահատելով, Դարոնյանը դրանց մեջ տեսնում է կրոնա-միստիկական նախապաշարումներից ժողովրդին դուրս բերելու լուսավորական ծրագրի իրագործումը, ծրագիր, որ ռուս հեղափոխական-դեմոկրատների օրինակով փորձում էր կիրառել հայ իրականության մեջ Միքայել Նալբանդյանը։

Մոսկվայի համալսարանի և առհասարակ 1850—60-ական թվականների ռուս իրականության լայն ճանաչումը Դարոնյանի հետազոտությունը դարձնում են առանձնապես հետաքրքիր։ Այստեղ կա և՛ միջավայրի իրական զգացողություն, և՛ կապերի ու հարաբերությունների ճշգրիտ ճանաչում։ Տեսնում ենք ռուս միջավայրում հասակ նետող մի իսկական մարտիկի բնութագիրը, որ մանրամասներում և հատկապես նրբերանգներում տարբերվում է ավանդական Նալբանդյանից, և այդ այն պատճառով, որ հետազոտողը հիանալի է զգում ռուս միջավայրը, ճանաչում ու գնահատում է յուրաքանչյուր մասունք ու մանրուք։ Մ. Նալբանդյանի մոսկովյան և պետերբուրգյան ուսումնառության տարիներին նվիրված էջերը աչքի են ընկնում ոչ միայն այդ յուրահատկությամբ։ Դարոնյանը գրում է նաև ռուս ընթերցողի համար։ Նրա գիտական ծրագրում կա ռուս-հայ պատմա-հասարակական առնչությունների գնահատումը և դրանց վերաբերյալ էմպիրիկ ամբողջ նյութի վերհանումը։ Այս տեսակետից «Միքայել Նալբանդյան» աշխատությունը որոշ իմաստով վերաճում է 1850—60-ական թվականների հայ-ռուս գաղափարական ու հասարակական համագործակցության պատմության։

Այդ լայն համայնապատկերը մասնավորապես երևան է գալիս ռուս հեղափոխական-դեմոկրատների հետ Մ. Նալբանդյանի անձնական-գործնական առնչությունների և գաղափարական կապերի ուսումնասիրության ժամանակ։ Այստեղ Դարոնյանը չի մոռանում և ոչ մի մանրուք, ներբերում է գիտությանը մինչև այժմ անհայտ փաստեր, հինը՝ ընթերցում նորովի, և այս ամենը ծառայեցնում գրքի հիմնական ըմբռնմանը՝ ռուս ժողովրդի և Ռուսաստանի ժողովուրդների ազատագրական պայքարի խոր լուսաբանությանը, պայքար, որ գլխավորում էին ռուսական սոցիալ-դեմոկրատների նախորդները։

«Հեղափոխական իրադրության տարիներին։ Հեղափոխական-դեմոկրատական պոեզիան և հրապարակախոսությունը (1859—1862)» գլխում գրականագետը հանձնառում է նաև պատմաբանի դեր և հանդես բերում ռուսական հեղափոխական-դեմոկրատիայի պայքարի պատմության լուրջ ու լայն իմացություններ։ Դարոնյանը սկզբնաղբյուրների (արխիվների, մամուլի) լավագիտակ հետազոտող է։ Նա, իհարկե, ավելի նկարագրող է, քան վերլուծող, ավելի պատմագիր, քան պատմաբան, բայց դա չի խանգարում նրան երբեմն-երբեմն զբաղվել ու լուծել նաև գիտական սկզբունքային նշանակություն ունեցող շատ հարցեր։ Հատկապես ընդ-

սծելի է Մ. Նալբանդյանի դրական ուղղության պրոբլեմին Դարոնյանի տված մեկնաբանության արժեքը։ «Մինին խոսք, մյուսին հարսնս» վիպակը վերլուծելիս գրականագետը միանգամայն ճիշտ և բավականաչափ արդյունավետ տեսակետ է զարգացնում Նալբանդյանի ստեղծագործական մեթոդի վերաբերյալ։ Մեջբերելով հեղափոխական դեմոկրատի 1857 թ. գրած նամակներից մեկի չափազանց ուշագրավ տողերը հիշյալ վիպակի մասին, Դարոնյանը ընդհանուր տիպաբանական քննությամբ հաստատում է, որ Նալբանդյանի գեղարվեստական ստեղծագործական ուղղությունը լուսավորական ռեալիզմն է։ Բնական մարդու և բնական բարոյական կրքերի լուսավորական իդեալի ու գեղարվեստական, դիտա-փիլիսոփայական, հրապարակախոսական ոճերի համադրումից ծնված ստեղծագործական այդ մեթոդը հենվում էր դաստիարակությամբ և լուսավորությամբ բանականը հաստատելու ըմբռնման վրա։ Հետագայում միայն Նալբանդյանը փոքր-ինչ ընդարձակեց լուսավորական ռեալիզմի ճանաչողական սահմանները («Մեռելահարցուկ»)։ Կենսուրախ, զավեշտական տոնը, որ հատուկ է նրա արձակին և որը ինչպես ճիշտ նկատում է գրականագետը, նրան մերձեցնում է Ֆիլդինգի, Վոլտերի, Դիդրոյի և Գերցենի հետ, տարածվում է նրա ստեղծագործության մեջ՝ վերաճելով աշխարհի ընկալման յուրատեսակ գեղարվեստական ձևի։ Այդ ձևը լուսավորական գաղափարաբանությունը դարձնում է ավելի դյուրընկալ և հրապուրիչ։ Այս առումով հետաքրքիր են Մ. Նալբանդյանի քննադատական ժառանգությանը նվիրված հատվածները։ Հետևելով «Կրիտիկա Սոս և Վարդիթերի» աշխատության ավանդական մեկնաբանություններին, Դարոնյանը, սակայն, այստեղ էլ փորձում է «ճշգրտել» բնագրի ընթերցման հին հակասությունները։ «Սոս և Վարդիթեր» վեպի գեղարվեստական թուլությունների վերհանումը «Կրիտիկայում» գրականագետը բացատրում է գեղարվեստականության և ռեալիզմի այն պահանջներով, որ, որպես չափանիշ, առաջադրում էր Նալբանդյանը գրականության և արվեստի երկերը գնահատելիս։

Ժողովրդայնության խնդիրը արծարծելիս Դարոնյանը խորամտորեն նկատում է, որ այն Նալբանդյանի, ինչպես և Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի պատկերացմամբ՝ անպայմանորեն կապվում էր գեղարվեստական իդեալի հետ, իդեալ, որ, ըստ էության, մարմնավորում էր ժողովրդի լավագույն գծերը։

Ս. Դարոնյանը համեմատական գրականագիտության ներկայացուցիչներից է։ Այս գրքում բացահայտվել են գրականագետի ու գրականության պատմաբանի նրա կողմնորոշումները՝ համեմատական գրականագիտության հետազոտական մեթոդների և արդյունքների նկատմամբ։ Գրական կապերի յուրաքանչյուր փաստ տվյալ նշանակությունից զատ ունի գրական-գեղարվեստական օրինաչափություն կամ կապակցությունները բացահայտելու ներքին մղում։ Դարոնյանը գիտակցորեն է օգտվում այդ մղումից։ Հատկապես ռուսական իրականության խոր իմացությունը գրականագետին հնարավորություն է տալիս հետևել գաղափարական-մշակութային ներթափանցումների բարդ պրոցեսին, հասկանալ դրա ներքին մեխանիզմը և ճշտորեն սահմանագծել մարդկանց հոգևոր հարստացման գործում գաղափարների, մտքերի, գործնական շփումների ու անձնական փոխհարաբերությունների նշանակությունը։

«Միքայել Նալբանդյան» ուսումնասիրությունը բացահայտում է իրոք հերոսական մի կյանքի ամբողջական պատմությունը։ Ազատության զինվորի մարդկային գեղեցիկ դեմքը հառնում է տողերի արանքից՝ լավ հյուսված, հետաքրքրական ու հարուստ փաստական նյութի մեջ ամփոփված պատմական ճշմարտությունից։ Եվ սա գրքի ամենամեծ արժանիքն է։

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր